ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2011 Թ. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

Մասնակցում էին համայնքի ղեկավարի աշխատակազմը, համայնքային ենթակայության հիմնարկների տնօրենները և աշխատողները, համայնքի 4 դպրոցների ուսուցիչները, հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքի քառամյա զարգացման ծրագրի շրջանակներում կատարվել են զգալի աշխատանքներ, որոնց հետևանքով բարելավվել են ջրամատակարարման սանիտարահիգիենիկ պայմանները, բարեկարգվել և լուսավորվել են քաղաքի փողոցները, կանաչապատ գոտիները, տրանսպորտային միջոցների համար երթևեկելի են դարձվել դաշտամիջյան ճանապարհները: Համայնքի ղեկավարը մանրամասնեց համայնքում իրականացված մի շարք ծրագրեր, մասնավորապես՝

1. Սոցներդրումների հիմնադրամի միջոցներով և համայնքի ներդրումով ավագ դպրոցում ավարտվել է մարզադահլիճի կառուցումը՝ 120 մլն դրամ նախահաշվային արժեքով:

2.Ավարտին են մոտենում երաժշտական դպրոցի շենքի կառուցման աշխատանքները: 2011 թ. կատարվել են 58 մլն դրամ արժողությամբ շինարարական աշխատանքներ:

3.Քաղաքի գլխավոր, Մաշտոցի փողոցում, պետբյուջեի միջոցներով կատարվել են 80 մլն դրամի ասֆալտապատման աշխատանքներ, իսկ համայնքի բյուջեի միջոցներով խճապատվել են քաղաքի երկրորդական փողոցները:

4. Պետբյուջեի տրամադրած 15 մլն դրամով կապիտալ նորոգվել են 4 բազմաբնակարան շենքերի տանիքներ:

5.,,Վորլդ Վիժն,, միջազգային կազմակերպության միջոցներով և համայնքի ներդրումով կառուցվել են երկաթբետոնե աստիճաններ արհեստագործական ուսումնարան տանող ճանապարհահատվածում և Շիրազի փողոցում:

6.Ասիական զարգացման բանկի ներդրումով բարելավվել է Բերդի խմելու ջրի ներքին ցանցը, կապիտալ վերանորոգվել են մաքրման կայանը և 4 օրական կարգավորման ջրամբարները /ՕԿՋ/:

7.Կապիտալ նորոգվել է Բերդ-Ներքին Կարմիրաղբյուր ոռոգման ցանցը:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1 ՀՈՒԼԻՍԻ 2011 ԹՎԱԿԱՆ ԲԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Մասնակցեցին Հայրենական պատերազմի և Աշխատանքի վետերաններ, զոհված ազատամարտիկների հարազատներ, դպրոցականներ, համայնքի բնակիչներ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ տարեցտարի բարեկարգվում և գեղեցկանում է մեր քաղաքը: Բոլորս ենք գիտակցում շրջապատի մաքրության դերը բնակչության առողջության պահպանման, առողջ ու գեղեցիկ սերունդ ունենալու գործում:

Ի՞նչ աշխատանքներ է ձեռնարկել քաղաքապետարանն այս ուղղությամբ: 2011թ. ապրիլի 1-ից 30-ը քաղաքում անցկացվեց սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակ, որի ընթացքում քաղաքի տարածքում գործող դպրոցներին, հիմնարկ-ձեռնարկություններին կից տարածքներում կատարվեց սանմաքրում և աղբի տեղափոխում, բարեկարգվեցին Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան պատերազմում զոհվածների հուշարձանների շրջակայքը, բազմաբնակարան շենքերի մուտքերը, բակերը: Ապրիլի 23-ին, համաքաղաքային շաբաթօրյակի օրը, հատվեցին մայթեզրերի ծառերի չոր ճյուղերը, կատարվեց գազոնների կանաչապատում և ծաղկապատում, 2010 թ. շաբաթօրյակի ժամանակ կատարված ծառատունկից հետո տնկիների կպչողականության ուսումնասիրության արդյունքներից ելնելով՝ հատվեցին ծառերի չոր ճյուղերը, կատարվեց բաժակափոր, փխրեցում և տնկվեցին նոր ծառեր:

Քաղաքում, ըստ հաստատված ժամանակացույցի, կատարվում է աղբահանություն: Քաղաքի տարածքում տեղադրված են 250 մեծ և փոքր աղբարկղեր: Ամեն տարի քաղաքապետարանը 17մլն 700 հազար դրամ է տրամադրում աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար:

Ուշադրության կենտրոնում է նաև քաղաքի շրջակայքում գտնվող հուշարձանների և աղբյուրների շրջակա տարածքների մաքրության և պահպանության հարցը: Քաղաքի երիտասարդության ուժերով կազմակերպվել է Մայրիվանքի /13-րդ դար/ արտաքին տեսքի և տարածքի բարեկարգումը:

Քաղաքապետարանի ,,Բերդ,, թերթում բացվել է հատուկ խորագիր, ուր լուսաբանվում են մեր քաղաքը մաքուր պահելու, բարեկարգելու խնդիրները և կատարված աշխատանքները:

Վերջում քաղաքապետը նշեց, որ քաղաքը մաքուր, գեղեցիկ դարձնելու համար պետք է մտահոգվեն բոլորը՝ թե' տարեցները, թե' երիտասարդները, թե' դպրոցականները:

Բերդի համայնքի ղեկավար Ա. Շառյան